

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013

Ստեփանակերտի քաղաքապետարանի
գործունեության

2013 թվականին ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանն իր հիմնական գործունեությունն իրականացրել է ԼՂՀ սահմանադրության, <<ԼՂՀ շրջաններում պետական կառավարման մասին>> ԼՂՀ Նախագահի հրամանագրի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ԼՂՀ օրենքի հիման վրա:

Քաղաքապետարանի 2013 թվականի գործունեության համար ծրագրային հիմք են հանդիսացել՝

- ԼՂՀ նախագահի նախընտրական ծրագիրը,
 - ԼՂՀ կառավարության գործունեության ծրագիրը,
 - ԼՂՀ կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը:
- Հաշվետու ժամանակաշրջանում քաղաքապետարանի կողմից իրականացվող գործունեությունն ուղղված էր բնակչության բարեկեցության բարելավման նպատակով համայնքային նշանակության հարցերի լուծմանը և համայնքի սեփականության տնօրինմանը: Քաղաքապետարանի կողմից իրականացված միջոցառումները միտված էին օրենքով նախատեսված պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացմանը հետևյալ բնագավառներում՝
- ֆինանսներ,
 - քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն,
 - հողօգտագործում,
 - տրանսպորտ,
 - աշխատանք և սոցիալական ծառայություն,
 - առևտուր և ծառայություններ,
 - հասարակական կարգի պահպանություն,
 - պաշտպանություն,
 - քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն,
 - կրթություն, մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ,
 - ֆիզիկական կուլտուրա և սպորտ,
 - արտաքին կապեր:

Ֆինանսներ

Ստեփանակերտի քաղաքային համայնքի 2013 թվականի տարեկան բյուջեի ընդհանուր մուտքերը կազմել են 1048914.3 հազ.դրամ՝ պլանավորված 1110135.1 հազ.դրամ գումարի 94.5 %-ը: Ընդհանուր մուտքերի 37.0 %-ը կազմել են սեփական եկամուտները, որոնց գծով պլանավորված 413825.0 հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 387914.3 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 93.7 %: Նախորդ տարվա համեմատ սեփական եկամուտներն աճել են 16254.0 հազ.դրամով կամ 4.4 %-ով:

Շենքերից և շինություններից գանձվող գույքահարկի գծով մուտքերը կազմել են 110444.4 հազ.դրամ՝ նախատեսված 117000.0 հազ.դրամի 94.4%-ը: Նախորդ տարվա համեմատ մուտքերն աճել են 13141.7 հազ.դրամի չափով կամ 13.5 %-ով /շենքեր և շինությունների մասով 8653.4 հազ.դրամի չափով չվճարված գույքահարկի նյութերը գտնվում են դատարանում/: Հողի հարկից գանձվող մուտքերը կազմել են 11766.1 հազ.դրամ՝ պլանավորված 12500.0 հազ.դրամի 94.1 %-ը /հողի հարկի մասով 894.3 հազ.դրամի չափով չվճարված հարկի նյութերը գտնվում են դատարանում/:

Փոխադրամիջոցներից մուտքագրվել է 119575.4 հազ.դրամի գույքահարկ, որը կազմում է պլանավորված 130200.0 հազ.դրամի 91.8 %-ը: Նախորդ տարվա համեմատ այն նվազել է 6511.7 հազ.դրամի չափով, որը պայմանավորված է նախորդ տարիներին գոյացած ապառքների մարման և նրանց ծավալների նվազեցման հետ /փոխադրամիջոցների մասով 13356.3 հազ.դրամի չափով չվճարված գույքահարկի նյութերը գտնվում են դատարանում/:

Տեղական տուրքերի գծով մուտքագրվել է 56413.4 հազ.դրամ, որը կազմում է նախատեսված 61020.0 հազ.դրամի 92.5 %-ը: Նախորդ տարվա համեմատ մուտքերն աճել են 8090.5 հազ.դրամով կամ 16.7%-ով: Պետական տուրքերի գծով մուտքագրվել է 18144.8 հազ.դրամ՝ պլանավորված 20500.0 հազ.դրամի դիմաց: Կատարողականը կազմել է 88.5 %: Այլ հարկային եկամուտների գծով մուտքագրվել է 5601.1 հազ.դրամ կամ կատարողականը կազմել է 100%:

Համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների 63.0%-ը կազմել է պետական բյուջեից տրամադրվող դոտացիան: 2013թ. տարեկան բյուջեի պլանավորված դոտացիայի գումարը կազմել է 696310.1 հազ.դրամ, որից հատկացվել է 661000.0 հազ.դրամ /կատարողականը կազմում է 94.9%/: Նախորդ տարվա համեմատ հատկացված գումարը նվազել է 20000.0 հազ.դրամի չափով: Այլ եկամուտների գծով 2013թ. մուտքագրվել է 65969.1 հազ.դրամ՝ պլանավորված 67005.0 հազ.դրամի դիմաց /կատարողականը կազմել է 98.5%/:

Հողերի վարձակալության մասով համայնքային բյուջեի եկամուտները կազմել են 11633.7 հազ.դրամ, պլանավորված 13505.0 հազ.դրամի դիմաց /կատարողականը կազմել է 86.1%/: Գույքի վարձակալությունից եկամուտների կատարողականը կազմել է 43.3% կամ հավաքագրվել է 5849.7 հազ.դրամ՝ նախատեսված 13500.0 հազ.դրամի դիմաց: Հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարների մուտքերը կազմել են 4429.4 հազ.դրամ՝ 3500.0 հազ.դրամի դիմաց /կատարողականը կազմել է 126.6%/: Վարչական գանձումներից մուտքերը կազմել են 31280.1 հազ.դրամ՝ 21500.0 հազ.դրամի դիմաց, կամ աճը կազմել է 45.5%, իսկ տուգանքներից և տույժերից մուտքերը՝ 8710.2 հազ.դրամ՝ 8500.0 հազ.դրամի դիմաց /կատարողականը կազմել է 102.5%/:

Քաղաքային համայնքի 2013թվականի տարեկան բյուջեի ծախսերը ֆինանսավորվել են 1047687.2 հազ.դրամի չափով, որը կազմում է պլանավորված 1120782.4 հազ.դրամի 93.5%-ը: Համայնքի ենթակայության կազմակերպությունները ֆինանսավորվել են 98.9%-ով:

Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

2013թ. ընդունվել է քաղաքաշինության բնագավառին առնչվող 1450 որոշում, ֆիզիկական և իրավաբանական անձերին տրամադրվել է շինարարության թվով 600 թույլտվություն: Նշված ժամանակաշրջանում քաղաքացիներին տրամադրվել են 225 ավարտական ակտեր և քանդման վերաբերյալ թվով 32 թույլտվություններ: Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի և շինարարության ավարտման աստիճանի վերաբերյալ պատրաստվել է 71 տեղեկանք: Հրավիրվել է Ստեփանակերտի վարչական սահմաններում գտնվող ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակը որոշող հանձնաժողովի 14 նիստ, որտեղ քննարկվել է 127 հարց: Տեղի է ունեցել Ստեփանակերտի քաղաքապետարանին կից գործող ճարտարապետական և քաղաքաշինական խորհրդի 5 նիստ, ուր քննության է առվել 27 հարց:

Հաշվետու ժամանակահատվածում ԼՂՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության հետ համատեղ Ստեփանակերտ քաղաքում՝ բազմաբնակարան, բազմաֆունկցիոնալ, հասարակական նշանակության շինարարություն իրականացնող թվով 16 սուբյեկտների մասով իրականացվել են ստուգումներ՝ քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարման վերաբերյալ: Քաղաքաշինության բնագավառում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ կապալառուներին տրվել են պարտադիր կատարման հրահանգներ և ցուցումներ: Հաստատվել են պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված

օբյեկտների շինարարության շահագործման թվով 25 փաստագրման ակտեր: Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետները խախտած 355 սուբյեկտներ գրավոր ծանուցվել են տրամադրված շինարարության թույլտվությունների ժամկետների երկարաձգման կամ ավարտական ակտերի ձևակերպման մասին:

Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են 13.502.0 հազ.դրամի չափով բազմաբնակարան շենքերի ճակատային մասերի ծեփման և երեսապատման սալիկների վերականգնման, 26.413.7 հազ.դրամի չափով՝ ջրատար, ջրահեռացման և կոյուղագծերի համակարգերի վերանորոգման աշխատանքներ: 2.723.0 հազ.դրամի չափով կատարվել են կանաչապատման տարածքների ոռոգման համակարգի վերանորոգման, իսկ հենապատերի և աստիճանների վերակառուցման մասով՝ 20.586.3 հազ.դրամի աշխատանքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքային բյուջեի միջոցների հաշվին Վ.Սարոյան փողոցի N 41 շենքի բակում կառուցվել է խաղահրապարակ: Մոցիալապես անապահով ընտանիքների բնակարանների վերանորոգման ծրագրերով իրականացվել են 9747.3 հազ.դրամի չափով նորոգման աշխատանքներ:

Ստեփանակերտի կառուցապատման և զարգացման, մարդկանց կենսական նշանակության խնդիրները մշտապես գտնվել են հանրապետության ղեկավարության և քաղաքային իշխանությունների տեսադաշտում, ու անհրաժեշտ քայլեր են ձեռնարկվել դրանց լուծում տալու համար: Այդ համատեքստում, մասնավորապես, կարևորվել են ծայրամասային թաղամասերի բարեկարգման ու ենթակառուցվածքների զարգացման խնդիրները, որոնք փուլ առ փուլ իրենց լուծում են ստացել: Նման ծրագրերի իրագործմանը իրենց աջակցություն են բերել ինչպես արտերկրի՝ ազգությամբ հայ, այնպես էլ՝ այլազգի բարերարները: Այդ տեսակետից, շինարարական ձեռնարկումների առումով, 2013 թվականն աչքի է ընկել մի շարք հիշարժան իրադարձություններով: Բարեգործական ծրագրի շրջանակներում հանդիսավորությամբ շահագործման են հանձնվել Հանրապետական բժշկական կենտրոնը, վերակառուցված ու բարեկարգ <<Մենք ենք, մեր լեռները>> հուշահամալիրը, Արմենավան թաղամասի նորակառույց խաղահրապարակը՝ հայ և ֆրանսիացի ժողովուրդների բարեկամությունը խորհրդանշող շատրվաններով: Հարգանքի խորհրդանիշ էր ճարտարապետ Արամ Շիրինյանի հիշատակը հավերժացնող հարթաքանդակի տեղադրումը նրա ապրած տան ճակատին:

Բնակարանային խնդիրը մայրաքաղաքում շարունակում է առաջնահերթությունների թվում մնալ: 2013թ. կայացել է բնակարանային հարցերով հանձնաժողովի 8 նիստ և բավարարվել 36 քաղաքացու դիմում: Բնակհաշվառման հերթացուցակներում ընդգրկվելու վերաբերյալ դիմում է ներկայացրել 46 քաղաքացի, որից 14-ը բավարարվել է: Կայացել է Ստեփանակերտ քաղաքում քաղաքացիների հաշվառման և հաշվառումից հանելու հարցերով հանձնաժողովի 46 նիստ, որտեղ քննարկվել է հաշվառման հարցով քաղաքապետարան ներկայացված թվով 604 դիմում: Արդյունքում՝ 581 խնդրանք բավարարվել է, 23-ը՝ տարբեր պատճառներով մերժվել:

Հաշվետու ժամանակահատվածում ոչ բնակելի տարածքի հատկացման վերաբերյալ ընդունվել է 35 որոշում: Համայնքի ավագանու համաձայնությամբ թույլատրվել է մասնավորեցնել 12 օբյեկտ, ոչ բնակելի տարածքները վարձակալելու նպատակով՝ 6 օբյեկտ: Զոհված ազատամարտիկների և արցախյան պատերազմի առաջին խմբի հաշմանդամների ընտանիքներին 2013-ին հատկացվել է թվով 32 բնակարան:

Իրավունքների պետական գրանցում ստանալու նպատակով հաշվետու ժամանակաշրջանում պատրաստվել է և ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանում է ներկայացվել ու պետական գրանցում ստացել պետական և համայնքային գույք հանդիսացող 124 միավոր: Աշխատանքներ են տարվել նախկինում կնքված կառուցապատման պայմանագրերի դիմաց

վճարումների ապահովման ուղղությամբ, ինչի արդյունքում համայնքային բյուջե է փոխանցվել 776.5 հազ.դրամ: Կառուցապատման իրավունքով տրամադրված 35 անշարժ գույքի օտարման վերաբերյալ ընդունվել են որոշումներ: Կնքված պայմանագրերի դիմաց հողամասերի օտարումից համայնքային բյուջե է փոխանցվել 928.1 հազ.դրամ, շինությունների օտարումից՝ 1675.3 հազ.դրամ: Հասցեի տրամադրման և փոփոխման վերաբերյալ ընդունվել է 372 որոշում:

2013թ. մասնակի բավարարվել են բնակիչների պահանջները՝ տների տանիքների վերանորոգման վերաբերյալ, բազմաբնակարան շենքերում տեղադրվել են 424 գծ/մ. անձրևաջրահեռացման խողովակներ ու 59գծ/մ. ջրհորդաններ: 184 բնակարաններում մաքրվել են ծխնելույզներն ու օդափոխիչ ուղիները: Պարբերաբար իրականացվել են բազմաբնակարան շենքերի և մուտքերի, ինչպես նաև նկուղների մաքրման աշխատանքներ:

<<Ստեփանակերտի համայնքային ծառայություն>> ՓԲԸ-ն 2013թ. աշխատանքներ է իրականացրել համայնքի կողմից մատուցվող կոմունալ ծառայությունների մասով՝ տեղեկատվության խմբագրման, հաշվառման բազայի վարման, ներքաղաքային երթուղիների երթակարգավորման ծառայության, համայնքում հասցեավորման և հասցեների գրանցման գործառնությունների վերաբերյալ: Համաձայն 2013թ. հաստատված ֆինանսական պլանի, ջրամատակարարման-ջրահեռացման ծառայության գծով նախատեսված 242.000.0 հազ.դրամի փոխարեն հավաքագրվել է 313.272.1 հազ.դրամ /2012-ին հավաքագրվել էր 231.225.0 հազ.դրամ/ կամ առաջադրանքն իրականացվել է 129.5 %-ով: Բնակչահագործման ծառայության գծով նախատեսված 119.868.2 հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 106.222.9 հազ.դրամ /2012-ին հավաքագրվել էր 104.118.0 հազ.դրամ/, ինչը կազմում է պլանավորվածի 88.6 %-ը: Աղբահանման ծառայության գծով նախատեսված 137.912.9 հազ.դրամի փոխարեն հավաքագրվել է 127.880.3 հազ.դրամ /2012-ին հավաքագրվել էր 110.859.0 հազ.դրամ/ կամ առաջադրանքն իրականացվել է 92.7 %-ով:

Ծառայությունն իր գործառնությունների շրջանակում կատարել է հասցեավորման և հասցեների գրանցման հետ կապված աշխատանքներ, ինչը թույլ է տվել բազան համալրել գույքային նոր միավորներով: 2013թ. վերահասցեավորվել և կանոնակարգվել են Ջորգե փողոցի, Ջորգե 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ նրբանցքների, Ջորգե 1-ին, 2-րդ փկղ., Գյուրջյան փողոցի, Գյուրջյան նրբանցքի, Գյուրջյան 1-ին, 2-րդ, 3-րդ փակուղիների, Գայի փողոցի, Բեկզադյան փողոցի, Բեկզադյան նրբ. անշարժ գույքի հասցեները:

Հաշվետու ժամանակաշրջանում <<Ջերմային տնտեսություն>> ՓԲ ընկերությունը <<Ձմեռ>> ծրագրի շրջանակներում ապահովել է թվով 16 կաթսայատան անխափան աշխատանքը: 2013թ. մասնակի նորոգումներ են իրականացվել մայրաքաղաքի համար 2, 7, 11 դպրոցներում, Վ.Սարգսյան փողոցի հ.25 վարչական շենքում ու մի շարք այլ հիմնարկներում:

Ուշադրության կենտրոնում են գտնվել մայրաքաղաքի սանիտարական մաքրության ապահովմանը միտված աշխատանքները: 2013թ. համայնքի տարբեր տարածքներում կառուցվել են թվով 5 նոր աղբահարթակներ, տեղադրվել 95 աղբարկղ, վերանորոգման են ենթարկվել նախկինում կառուցվածները: Շաբաթօրյակների միջոցով արդյունավետ աշխատանքներ են իրականացվել քաղաքի տարբեր թաղամասերում, հատկապես ծայրամասերում: Քաղաքի սանիտարական վիճակը բարելավելու նպատակով, ԼՂՀ կառավարության աջակցությամբ ձեռք են բերվել 2 նոր աղբատար մեքենաներ, ինչպես նաև ձյունահավաք տեխնիկա: Ձմռան նախապատրաստման աշխատանքների շրջանակում պահեստավորվել է համապատասխան քանակությամբ աղ և ավազ: Աղբահանման և սանիտարական մաքրության գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար բրիգադներն առաջնորդվել են երթուղիների քարտեզներով, ինչը հնարավորություն է ընձեռնում պատշաճ հսկողություն սահմանել տեղամասերում:

2013թ. «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ գործունեությունը նպատակաուղղված է եղել Ստեփանակերտ քաղաքի բնակչության ջրամատակարարման և կոյուղու ցանցերի սպասարկման ծառայության մատուցման որակի բարձրացմանը: Եթե 2012թ. արձանագրվել էր սառցակալման 57 դեպք, ապա 2013թ. դրանց քանակն ընդամենը 5-ի էր հասնում, որոնք օպերատիվ կերպով վերացվել են ընկերության համահավաք բրիգադի կողմից: Գարնանային ձնհալներից և սելավներից առաջացած ջրի պղտորումները հիմնականում քաղաքի բնակչությունը չի զգացել համար 1 մաքրման կայանի լիարժեք շահագործման և այլընտրանքային՝ խորքային արտեզյան հորերի օգտագործման արդյունքում: Մասնակիորեն, այդ պղտորումները զգացվել են համար 2 մաքրման կայանից սնվող գոտիներում, քանի որ մաքրման կայանի շինարարական աշխատանքները դեռ ավարտված չեն: Քաղաքի կենտրոնական մասն ընդգրկող 10-րդ գոտու շուրջօրյա ջրամատակարարումը, որը բնակչության ավելի շատ հուզող հարցերի գերակշիռ մասն է կազմում, գտնվում է ավարտման փուլում: Ընթացքի մեջ են նշված գոտու ՕԿՁ-ի փորձարկման և ախտահանման աշխատանքները:

Քաղաքի բնակչության ջրամատակարարման և կոյուղու սպասարկման աշխատանքների ծառայության որակը բարձրացնելու նպատակով 2013թ. հունվարից ընկերությունում գործում է երեկոյան վթարային համահավաք բրիգադ, որն իրականացնում է կոյուղագծերի, բազմաբնակարան շենքերի ներքին կոյուղացանցի և ջրագծերի սպասարկման ծառայություն: Բողոքների արագ արձագանքման նպատակով ընկերությունում գործում է շուրջօրյա դիսպետչերական ծառայություն՝ 23-01 կարճ հեռախոսահամարով:

Տարվա կտրվածքով ընկերությունն իրականացրել է ջրագծի ավելի քան 600 հատվածի նորոգման աշխատանքներ, որից մոտ 200-ը՝ նոր ջրագծի վրա: Ջրագծերի վթարները համեմատած նախորդ տարվա հետ, մոտ 50 %-ով նվազել են, ինչը պայմանավորված է մետաղյա խողովակները՝ նոր պլաստմասե խողովակներով վերափոխման հետ:

2013թ. մի շարք օբյեկտներում կյանքի է կոչվել տեսախցիկներով հեռավերահսկման աշխատանքների իրականացումը: Բազմաբնակարան շենքերի ներքին կոյուղու գծերի ավելի քան 310 վթար է վերացվել, ինչպես նաև իրականացվել են մի շարք շենքերի կոյուղու կանգնակների փոխարինման աշխատանքներ: Երեկոյան ժամերին վթարային բրիգադը վերականգնել է ավելի քան 620 վթար: Համար 1 մաքրման կայանում ընկերությունն իրականացրել է ջրի նախապատրաստման ժամանակակից տեխնոլոգիաներին միացման աշխատանքներ, ինչը զգալիորեն բարձրացրել է նախապատրաստվող ջրի որակը և քանակը:

Հաշվետու ժամանակաշրջանում ընկերությունը ձեռք է բերել նոր՝ եվրոպական ստանդարտներին համապատասխանող լաբորատոր սարքեր, իրականացրել է սարքերի տեղադրման և գործարկման աշխատանքներ, ինչպես նաև ապահովել է համապատասխան մասնագետների նախապատրաստումը և վերապատրաստումը՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ մասնագիտացված կենտրոնում: Այժմ ջրարտադրության փուլում անալիզների արդյունքների վերլուծության հիման վրա ջրի նախապատրաստման միջոցառումներն իրականացվում են վաղօրոք կանխարգելիչ միջոցառումների ձևով: Անցյալ տարվա նորամուծություններից է նաև ընկերությունում գործող տեխնիկական մասը, որի առջև խնդիր է դրված գծագրական փաթեթների ձևով կանոնակարգել քաղաքի ջրամատակարարման, կոյուղու և ջրահեռացման իրական պատկերը: Այն հնարավորություն կտա ստեղծել արխիվ՝ ջրացանցի, կոյուղագծերի և անձրևաբնոց-նիչների հետագա շահագործումն առավել արդյունավետ դարձնելու համար:

2013թ. մայրաքաղաքի սպասարկվող կանաչ գոտիները ընդլայնվել են շուրջ 20000 քառ.մետրով: Համայնքի տարածքներում ընդհանուր հաշվով տնկվել են 730 հատ տարբեր տեսակի ծառեր: Ծերացած, չոր ծառերը հատվել են քաղաքապետի համապատասխան որոշման համաձայն, որոնք փոխարինվել են երիտասարդ տնկիներով: Ձևավորվել է 433 և երիտասարդացվել 189 հատ ծառ: Հատված ծառերի փայտանյութը պահեստավորվել է ընկերության տնկարանային տնտեսության տարածքում, որն օգտագործվում է ձմռան ամիսներին ջերմոցներում նորմալ ջերմաստիճան ապահովելու նպատակով: Պատշաճ մակարդակով է կազմակերպվել նորատունկ ծառերի և թփերի, սիզամարգերի և ծաղկանոցների խնամքը, որն իրականացվում է ագրոտեխնիկական պահանջներին համաձայն: Տարվա կտրվածքով մայրաքաղաքում տնկվել է 550.000 հատ ծաղկի սածիլ: Շրջաններին, հիմնարկ-ձեռնարկություններին, մանկապարտեզներին, դպրոցներին, հանրապետության համայնքներին ընկերության կողմից տրամադրված սածիլների ընդհանուր քանակը 37000-ի է հասնում:

2013թ. <<Արցախէներգո>> ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղի հետ համատեղ մայրաքաղաքում իրականացվել են էլեկտրամոնտաժային, նոր լուսատուների տեղադրման և լուսատուների վերանորոգման, արտաքին լուսավորման ցանցի ստեղծման աշխատանքներ, տեղադրվել է թվով 122 նոր լուսատու և 61 հենասյուն: Մասնավորապես, ծայրամասային փողոցների լուսավորվածությունը հասցվել է գրեթե 100 տոկոսի: Ա.Մանուկյան փողոցում կապիտալ վերակառուցման է ենթարկվել արտաքին լուսավորման ցանցը՝ տեղադրելով 44 հենասյուն և 84 նոր լուսատու: Մի շարք ենթակայաններում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ: Հաշվետու ժամանակաշրջանում մայրաքաղաքի փողոցներում, բակերում և հարակից տարածքներում ընդհանուր առմամբ վերանորոգվել է 993 լուսատու: Կապված մայրաքաղաքի արտաքին լուսավորման, սպառվող էլեկտրաէներգիայի խնայողության հետ, պարբերաբար վերահսկվում են արտաքին լուսավորման համակարգի միացման-անջատման ռեժիմները:

Մայրաքաղաքի մի շարք թաղամասերի ճանապարհների բարելավման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում ԼՂՀ քաղաքաշինության նախարարության <<Արցախուղի>> ՓԲԸ-ի կողմից իրականացվել են շուրջ 5500մ ճանապարհի կոպճապատման աշխատանքներ, որոնք շարունակական բնույթ կկրեն՝ համաձայն ճանապարհահատվածների բարեկարգման ծրագրի:

Նպատակ ունենալով բարելավել ճանապարհային երթևեկությունը, համաձայն Ստեփանակերտ քաղաքի լուսացույցերի սպասարկման պայմանագրի ԼՂՀ ԿԱ ԼՂՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության համապատասխան մասնագետների հետ, վերահսկվել են քաղաքում գտնվող լուսացույցային օբյեկտների վերանորոգման և սպասարկման աշխատանքները:

Մայրաքաղաքում իրականացվել են ավտոճանապարհների կահավորման աշխատանքներ՝ պահանջվող տարածքներում տեղադրելով շուրջ 221 ճանապարհային նշաններ ու կատարելով մոտ 7000 քառ.մ հորիզոնական գծանշում:

Հողօգտագործում

2013թ. հասարակական նշանակության, անհատական տների և արտադրական նշանակության օբյեկտների կառուցման համար ընդունվել է թվով 222 որոշում, պետական /համայնքային/ սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 311 պայմանագիր, հողամասի վարձակալության՝ 7 և հողամասի ու անշարժ գույքի առուվաճառքի տրամադրման վերաբերյալ թվով 500 պայմանագիր: Անցկացվել են Ստեփանակերտ քաղաքի պետական սեփականություն համարվող

հողամասերի բաց աճուրդներ: ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության հետ համաձայնեցվել է կազմված հողային ֆոնդի առկայության և բաշխման /ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների/ հաշվետվությունը ու այն հաստատվել և ներկայացվել է ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե: ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի պետական կոմիտեի նախագահի և Ստեփանակերտի քաղաքապետի համատեղ հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ պետական գրանցման ժամանակ առաջացած սահմանային անճշտությունների վերացման նպատակով:

Արխիվային փաստաթղթերի հիման վրա ներդրվել է տեղեկատվական բազա, որն իր մեջ ընդգրկում է հատկացված հողամասերի վերաբերյալ օրենքով պահանջվող բոլոր անհրաժեշտ տվյալները:

Տրանսպորտ

Մայրաքաղաքի բնակչության տրանսպորտային սպասարկումն իրականացվում է 5 ավտոբուսային, 2 միկրոավտոբուսային և մեկ հատուկ երթուղիներով:

Հաշվետու ժամանակաշրջանում, համաձայն ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անկացման կարգի, մի շարք երթուղիներում կազմակերպվել են սպասարկման իրավունքի հատկացման, շարժակազմերի համալրման և փոխարինման աշխատանքներ:

Հաշվի առնելով NN 19 և 20 ներքաղաքային միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման ժամկետի լրացման և երթուղիների սպասարկման հայտ չներկայացնելու հանգամանքը, փոփոխության են ենթարկվել NN 19 և 20 երթուղիները: Արդյունքում՝ նշված երթուղիների շարժման ընթացուղիները միաձուլելով, ստեղծվել է նոր՝ N18 երթուղի: ԼՂՀ վարչապետի հանձնարարությամբ հիշյալ երթուղու ժամանակավոր սպասարկումն իրականացվում է «Ստեփանակերտ-սերվիս» ՓԲԸ-ի կողմից:

Ներքաղաքային ավտոբուսային երթուղիների կանոնավոր սպասարկման մակարդակի բարձրացման, ուղևորափոխադրման որակի նորմատիվ պահանջների պահպանման նպատակով կատարվել է Ստեփանակերտի ներքաղաքային կանոնավոր երթուղիների կանգառների գույքագրում, և արդյունքում ավելացվել են թվով 3 կահավորված երթուղիների կանգառներ:

Հաշվի առնելով մայրաքաղաքում վերջին տարիներին ավտոտրանսպորտի հոսքի ավելանալու միտումները, անհրաժեշտություն է ծագում քաղաքային երթուղային ցանցում շարունակաբար ավելացնելու ավտոբուսային երթուղիների քանակը՝ զուգահեռաբար նվազեցնելով միկրոավտոբուսների թիվը:

Ուղևորափոխադրումների սպասարկման որակը բարելավելու տեսանկյունից ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում օրակարգային են մնում ներքաղաքային տրանսպորտի սակագնի վերանայումը, ոչ կանխիկ փոխադրավարձի նոր համակարգի մշակումը, մայրաքաղաքի երթուղիների կանգառների կահավորման աշխատանքների բարելավումը, ինչպես նաև հաստատված չվացուցակների պահանջների, երթուղու ուղեգծի ինքնակամ շեղումների, ավտովարորդների հարգալից վերաբերմունքի և ուղևորների անվտանգ սպասարկման վերաբերյալ հարցերի արդյունավետ համակարգումն ու վերահսկողության ուժեղացումը:

Աշխատանք և սոցիալական ծառայություն

2013թ. սոցիալական որոշակի խմբերի ներկայացուցիչներին տրամադրվել է 225 ուղեգիր, որոնցից 195-ը՝ «Ջերմուկ», «Արգնի», «Կարմիր խաչ» առողջարաններում

բուժումներ ստանալու համար, 30 ուղեգիր տրամադրվել է Սևան քաղաքի <<Արևիկ>> հանգստյան տուն մեկնելու համար: Տրամադրվել են նաև պրոթեզավորման պարագաներ՝ լսողական ապարատ, թիկնասայլակ և աջակցություն՝ աչքի պրոթեզավորման համար:

2013թ. բաժնում գրանցվել է 512 գործազուրկ: Տարվա կտրվածքով՝ 2013թ. հունվարից մինչև դեկտեմբեր ամիսն ընդունվել է 1200 նպաստառուի գործ: Հունվար ամսից մինչև մայիս ամուսնության նպաստ է ստացել 123 ամուսնական զույգ՝ 300.0 հազ.դրամի չափով, մայիսից մինչև դեկտեմբեր ամիսը՝ 313 հոգի՝ յուրաքանչյուրը 150.0 հազ.դրամի չափով: Մայրաքաղաքի օրվա կապակցությամբ այցելություն է կատարել Ստեփանակերտի ծննդատուն և նվերներ հանձնել 9 նորածին երեխաների ու նրանց մայրերին, ինչպես նաև նվերներով այցելել է 4 հարսանյաց հանդիսությունների սրահ:

2013թ. միանվագ նպաստ է վճարվել 882 հոգու: 3 և հաջորդ երեխաների անվամբ բացվել են 184 ավանդային հաշիվներ:

Առևտուր և ծառայություն

2013թ. համայնքի տարածքում տրվել է բացօթյա և շրջիկ առևտուր կազմակերպելու, ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի և իրացման, մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու, առևտրի ու հանրային սննդի օբյեկտները ժամը 24.00-ից հետո աշխատելու, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առևտրի, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, կոմպրեսացված /սեղմված/ բնական գազերի, հեղուկացված գազերի վաճառքի 1134 թույլտվություն:

Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում խախտումների կանխման նպատակով պարբերաբար իրականացվել են ստուգումներ: Մասնավորապես՝ աշխատանքներ են տարվել օրենսդրությամբ թույլատրվող ապրանքների բացօթյա առևտրի կանոնակարգման ուղղությամբ և սահմանվել մշտական հսկողություն՝ առևտրի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքը բացառելու նպատակով: <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ԼՂՀ օրենքի շրջանակներում իրականացված ստուգումների արդյունքներում կազմվել է 70 արձանագրություն:

Հասարակական կարգի պահպանություն

ԼՂՀ ոստիկանության Ստեփանակերտ քաղաքի վարչության կողմից ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև համայնքում կատարված իրավախախտումների մասին պարբերաբար տեղեկատվություն է տրամադրվել համայնքի ղեկավարին:

Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել է վարչական հանձնաժողովի 19 նիստ, որի արդյունքում 125 քաղաքացի և իրավաբանական անձ ենթարկվել են վարչական պատասխանատվության: Հրավիրվել է անչափահասների գործերով հանձնաժողովի 10 նիստ: 36 անչափահաս վերցվել է հաշվառման, 27-ը՝ հանվել հաշվառումից:

2013 թվականի սեպտեմբերից մինչև նոյեմբեր ընկած ժամանակահատվածը <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ԼՂՀ օրենքի շրջանակներում ԼՂՀ առողջապահության նախարարության և կառավարությանն առընթեր ոստիկանության հետ համատեղ իրականացվել են ստուգումներ՝ առևտրի 48 օբյեկտներում, որոնցից 26-ում հայտնաբերվել է պիտանիության ժամկետն անցած ապրանքների իրացում: Հիշյալ փաստերի հիման վրա կազմվել են համապատասխան արձանագրություններ՝ ԼՂՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասով, որոնք ներկայացվել են Ստեփանակերտի քաղաքապետարանին կից գործող վարչական հանձնաժողովի քննարկմանը:

Պաշտպանություն

Առաջնորդվելով 2013թ. քաղաքաշտպանության հիմնական միջոցառումների պլանով, ինչպես նաև ՔՊ պետի ու ղեկավար մարմինների որոշումներով և կարգադրություններով, ակտիվ գործունեություն է ծավալվել Ստեփանակերտի ՔՊ համակարգում՝ բնակչության և տարածքների պաշտպանության խնդիրների լուծման ուղղությամբ: Ճշգրտվել է Ստեփանակերտի ՔՊ պլանը, խաղաղ ժամանակի ՔՊ ուժերի և միջոցների, բնակչության պատսպարման հաշվարկը:

Ստեփանակերտ քաղաքի ՔՊ ղեկավար կազմի, շտաբի ու ծառայությունների պետերի հետ միաժամանակ անցկացվել է հրամանատարաշտաբային ուսումնավարժություն՝ «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը Ստեփանակերտ քաղաքում՝ քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստականության բերման, հակառակորդի հարձակման ու հարձակման հետևանքների վերացման ժամանակ» թեմայով: Պատշաճ մակարդակով է անցել Ստեփանակերտ քաղաքի ՔՊ ղեկավար կազմի, շտաբի տարահանման մարմինների ու ՔՊ ծառայությունների պետերի մասնակցությամբ կազմակերպված շտաբային ուսումնավարժությունը, որը «Լավ» գնահատականի է արժանացել: 2013թ. հոկտեմբերի 21-ից 23-ը Շուշիի շրջանում անցկացված համատեղ հրամանատարաշտաբային ուսումնավարժության ժամանակ Ստեփանակերտ քաղաքի ՔՊ ղեկավար կազմը, շտաբը, տարահանման հանձնաժողովը և ՔՊ ծառայությունների անձնակազմը բերվել են «Բարձր» պատրաստականության վիճակի և մասնակցել տեսական ու գործնական միջոցառումներին:

2013 թվականին, ընդհանուր առմամբ, Ստեփանակերտի քաղաքացիական պաշտպանության կողմից անցկացվել է 35 գորավարժություն:

Կառույցի կողմից բավարար աշխատանքներ են տարվել համայնքի տարածքում հակահրդեհային միջոցառումների ապահովման ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում Ստեփանակերտում գրանցվել է 107 հրդեհի դեպք կամ նախորդ տարվա համեմատ հիշյալ արտակարգ պատահարների թիվը նվազել է 29-ով: Բնակելի տների հրդեհների քանակն աճել է 4-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ձմռան ժամանակաշրջանում էլեկտրական լարերի ծանրաբեռնվածության և անվտանգության կանոնների խախտման հանգամանքներով:

Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն

2013թ. ապահովվել է քաղաքապետարանի լիազոր ներկայացուցիչների մասնակցությունը ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանում, ուր ներկայացվել են թվով 175 հայցային և վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումներ՝ գույքահարկի գումարը բռնագանձելու վերաբերյալ, որից 62 գործով գումարները բռնագանձվել են, իսկ մնացած մասով գործերը գտնվում են դատական աստիճանում և ԼՂՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում:

Քաղաքապետարան դիմած քաղաքացիներին տրվել է անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն՝ ընտանեկան, որդեգրման, հողային, բնակարանային և այլ հարցերով:

Հրավիրվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 25 նիստ, որտեղ քննարկվել և համապատասխան եզրակացություններ են տրվել անչափահասի գույքն օտարելու թույլտվության, անգործունակ ճանաչված քաղաքացիների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների նկատմամբ խնամակալ նշանակելու, պատրոնած

սահմանելու, ծնողական իրավունքներից զրկելու, երեխայի բնակության վայրը որոշելու և երեխայից առանձին ապրող ծնողի՝ երեխայի հետ շփվելու ու մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Միաժամանակ հրավիրվել է որդեգրման հարցերով հանձնաժողովի 2 նիստ և ապահովվել թվով 17 գործերով խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի ներկայությունը՝ դատական նիստերին:

Հաշվետու ժամանակաշրջանում գործող օրենսդրության սահմաններում ընդունվել են նորմատիվային որոշումներ՝ «Ստեփանակերտ քաղաքում արտաքին գովազդի տեղաբաշխման/տեղադրման/ համաքաղաքային կանոնները և չափորոշիչները հաստատելու մասին», «Ստեփանակերտ քաղաքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու համաքաղաքային կանոնները հաստատելու մասին» և այլն: Ապահովվել է 130 վարչական, 27 քաղաքացիական և 5 քրեական գործերով Ստեփանակերտի քաղաքապետարանի ներկայացուցչի մասնակցությունը դատական նիստերին: Դատարան են ներկայացվել հայցադիմումի պատասխաններ, վերաքննիչ ու վճռաբեկ բողոքներ:

2013թ. կտրվածքով ԼՂՀ նախագահի և կառավարության աշխատակազմերից, ԼՂՀ Ազգային ժողովից և ԼՂՀ Պաշտպանության նախարարությունից, ինչպես նաև քաղաքացիներից ստացվել են 3177 գրություններ և դիմումներ: Նշված ժամանակահատվածում ընդունվել է քաղաքապետի 2380 որոշում և 221 կարգադրություն, համայնքի ավագանու 79 որոշում: 2013թ. քաղաքապետի մոտ ընդունելության է գրանցվել շուրջ 900 քաղաքացի՝ ամենատարբեր հարցերով: Այլ կառույցներից և կազմակերպություններից մուտաբերվել է 2463 գրություն:

Տարվա կտրվածքով մուտքագրվել են ԼՂՀ 92 օրենք, ԼՂՀ վարչապետի և կառավարության 80 որոշում, ԼՂՀ վարչապետի 2 արձանագրային հանձնարարականներ, որոնք սահմանված կարգով ծանոթացման են ներկայացվել աշխատակազմի պատասխանատու աշխատողներին և իրականացման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ: Սահմանված կարգով ժամանակին հաշվառվել են էլից գրությունները, կազմակերպվել վերջիններիս առաքումը 2240 հասցեատիրոջ:

Իրականացվել են քաղծառայողների վերապատրաստման, ատեստավորման և մրցույթի կազմակերպման հետ կապված աշխատանքներ: Անց է կացվել 5 մրցույթ, ատեստավորվել է 25 քաղծառայող, 19 քաղծառայող անցել է վերապատրաստման դասընթացներ:

Հաշվետու ժամանակաշրջանում քաղաքապետարանի վերահսկողության ծառայության կողմից զգալի աշխատանքներ են իրականացվել արտաքին գովազդի գործընթացը կանոնակարգելու ուղղությամբ: Համայնքի գովազդատուներին է ուղարկվել ավելի քան 200 գրություն՝ քաղաքի տարածքում գովազդի տեղադրման կարգին, պայմաններին ծանոթանալու և համապատասխան թույլտվություն ստանալու նպատակով: Արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար ընդունվել է շուրջ 30 որոշում: Ստեղծվել է գովազդատուներին պատկանող գովազդային վահանակների տեղաբաշխվածության բազա՝ նրանում ընդգրկելով նաև նախորդ տարիներին թույլտվության վերաբերյալ ստացած որոշումները: 2013թ. գովազդի մասով տեղական տուրքի հավաքագրման պլանը կատարվել է շուրջ 140 տոկոսով:

Կրթություն, մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Կատարվել են համապատասխան աշխատանքներ սովորողների կրթության գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու, նրանց հայեցի դաստիարակության, դասի, ուսումնական պարապմունքների մյուս ձևերի, արտադասարանական և

արտադրողական միջոցառումների կազմակերպման բարձր մակարդակ ապահովելու ուղղությամբ:

Հանրակրթական առարկաների նկատմամբ հատուկ կարողություններ ունեցող և առանձնակի հետաքրքրություն ցուցաբերած սովորողների վերհանման, ինչպես նաև գիտության հիմունքների ուսումնասիրման նկատմամբ աշակերտների շրջանում հետաքրքրություն առաջացնելու նպատակով կազմակերպվել են դպրոցականների առարկայական օլիմպիադաներ, որոնց արդյունքներով քաղաքային փուլում 96 /նախորդ ուստարում՝ 90/, հանրապետական փուլում 47 /նախորդ ուստարում՝ 37/, ՀՀ-ի եզրափակիչ փուլում 16 /նախորդ ուստարում՝ 9/ մասնակիցներ գրավել են մրցանակային տեղեր, և խարխուսվել գովասանագրերով, պատվոգրերով և դիպլոմներով:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել ու անց են կացվել «Վերջին զանգ», «Առաջին զանգ», «Ուսուցչի օր», «Ոսկե աշուն», «Մայրենիի օր», «Այբուբենի տոն», «Անկախության օր», «Ստեփանակերտի օր», հայ մեծանուն բանաստեղծներ Համո Սահյանին և Պարույր Սևակին, Արցախյան շարժման 25-ամյակին նվիրված ասմունքի մրցույթներ, տարվա լավագույն դպրոց, ուսուցիչ, զինղեկ, դաստիարակ մրցույթներ, որոնց արդյունքներով քաղաքային փուլի հաղթողները, բացառությամբ զինղեկի, ճանաչվել են հաղթող նաև հանրապետական փուլում:

Ավանդական է դարձել նաև համայնքի 1-6 տարեկան դպրոց չհաճախող երեխաների համար նոր տարվա հանդեսների կազմակերպումը, որն ուղեկցվում է հատուկ սցենարներով և բոլոր երեխաներին նվերների բաժանմամբ: Այս նպատակի համար ծախսվել է 5300.0 հազ.դրամ:

Անցած տարին կրթության համակարգի համար նշանավոր էր նրանով, որ շարունակվել է դպրոցաշինության գործընթացը. ավարտվել են համար 3 դպրոցի վերակառուցման և համար 5 հիմնական դպրոցի բակի բարեկարգման աշխատանքները, ընթացքի մեջ են համար 1 դպրոցի մասնաշենքի և համար 6 դպրոցի կառուցման աշխատանքները:

Շարունակվել է նախորդ ուս. տարում սկսած ուսուցիչների ատեստավորման գործընթացը, որի արդյունքում ատեստավորման հայտ ներկայացրած, վերապատրաստման դասընթացներին մասնակցած 134 ուսուցիչ անցել է ատեստավորման փուլը: Կազմակերպված է անցել դպրոցականների ամառային հանգիստը: Բարձր դասարանների տղաներն իրենց հանգիստն անց են կացրել Այգեստանի «Վարդանանք», իսկ 5-9-րդ դասարանների աշակերտները՝ «Գանձասար» ճամբարներում: Զոհված ազատամարտիկների ընտանիքների և շնորհաշատ 9 դպրոցահասակ երեխաներ իրենց հանգիստն անց են կացրել Հունաստանի Անոն-Սիրոս կղզում՝ այնտեղ ցուցադրելով Արցախյան շարժման 25-ամյակին նվիրված ծրագիր: Ուսուցիչների համար կազմակերպվել է ուխտագնացություն՝ Հայաստանի սրբավայրեր ու կրթամշակութային օջախներ:

Ուշադրության կենտրոնում են պահվել սովորողների ֆիզիկական դաստիարակության, նրանց շրջանում սպորտի և ռազմամարզական խաղերի հետագա առավել մասսայականացման հարցերը. կազմակերպվել ու անց են կացվել տարաբնույթ քաղաքային առաջնություններ, որտեղ մեր մարզիկները և թիմերը գրավել են մրցանակային տեղեր:

Համակարգի մասով, ի մի բերելով 2013-ի արդյունքները և կանխանշելով անելիքները 2014թվականի, մտահոգության հարց է մնում նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և դաստիարակության հարցերը: Չնայած գործող 3 պետական և 2 ոչ պետական կամ տարբեր գերատեսչություններին պատկանող մանկապարտեզներում ընդգրկված է մոտ 1100 երեխա, դպրոցում էլ գործում էին 13 նախապատրաստական խմբեր, այնուամենայնիվ, մտահոգության առարկա էր մնում մանկապարտեզ չհաճախող

նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և դաստիարակության հարցերը: Առկա բացը լրացնելու համար, ինչպես նաև մանկապարտեզներում ընդգրկված խմբերի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու և նախադպրոցականների պահանջարկը բավարարելու նպատակով 2013-2014 ուստարվա սկզբին դպրոցները համալրվել են 5 տարեկանների լրացուցիչ խմբերով: Ներկայումս դպրոցներում գործում են 5 տարեկանների 27 նախապատրաստական խմբեր, որոնցից 8 խումբ՝ 240 երեխայի ընդգրկմամբ, 9-ժամյա ռեժիմով և 19 խումբ՝ 530 երեխայի ընդգրկմամբ, 6-ժամյա ռեժիմով:

Հարստացվել է հիմնարկների ուսումնանյութական բազան, ձեռք է բերվել դպրոցական կահույք, նախադպրոցական խմբերի համար բացված ճաշարանները, ննջարանները և խաղասենյակ-դասարանները կահավորվել են անհրաժեշտ պարագաներով:

2013թ. ընդգրկուն ու հազեցած էր նաև Ստեփանակերտ քաղաքի մշակութային միջոցառումների շրջանակը: Միջոցառումների մի ամբողջ շարք նվիրված էր արցախահայության ազգային-ազատագրական պայքարի՝ դարաբաղյան շարժման 25-րդ տարեդարձին : Ընդ որում, ջանքեր են գործադրվել, որպեսզի այդ ձեռնարկումներին տոնական երանգ հաղորդվի և միջոցառումները համաժողովրդական տոնախմբության վերածվեն : Հատկանշական է, որ հիշարժան իրադարձությանը՝ դարաբաղյան շարժման 25-ամյակի նվիրված մշակութային միջոցառումները կենտրոնից տեղափոխվել են քաղաքի ծայրամասային թաղամասեր, որոնք լայն արձագանք են գտել հանրության շրջանում: Հոբելյանի կապակցությամբ մայրաքաղաքում անցկացվել է հայրենասիրական երգերի մրցույթ-փառատոն, որին իրենց ակտիվ մասնակցությունն են բերել քաղաքի բոլոր կրթօջախների երգչախմբերը: Փետրվարի 13-ին համաքաղաքացիների մասնակցությամբ կազմակերպվել է ավանդական <<Տրնդեգ>>: Պատշաճ մակարդակով են անցել կանանց միջազգային օրվան, մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառումները:

Բովանդակային առումով հետաքրքիր էր երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպված ակցիան, որին մասնակցեցին հազարավոր երեխաներ: Ծրագրի շրջանակներում համերգներ կազմակերպվեցին թվով 3 խոշոր բնակթաղամասերում: Հաջողությամբ են անցել Մայիսյան եռատոնին, ԼՂՀ անկախությանը և Քաղաքի օրվան նվիրված մշակութային միջոցառումները: Բացի Վերածննդի կենտրոնական հրապարակում և Շահումյանի անվան պուրակում ունեցած տոնական համերգներից, գեղարվեստական խմբերը ելույթներով հանդես են եկել ՊԲ կենտրոնական գորամասում:

Հիշյալ միջոցառումների շարքում կազմակերպվածության բարձր մակարդակով առանձնանում էր և մայրաքաղաք Ստեփանակերտի վերանվանման 90-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունների ծրագիրը, որը վերածվեց ժողովրդական տոնախմբության: Ձեռնարկվել են անհրաժեշտ բոլոր քայլերը, որպեսզի հազեցած լինեն նաև Ամանորին նվիրված համաքաղաքային տոնական միջոցառումները, և ստեփանակերտցիները Նոր տարին դիմավորեն բարձր տրամադրությամբ:

Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

2013թ. մարզական միջոցառումներն իրականացվել են նախապես հաստատված աշխատանքային օրացուցային պլանի համաձայն: Տարբեր մարզաձևերից քաղաքային առաջնություններում առաջնակարգ տեղեր գրաված թիմերը մասնակցել են հանրապետական մրցումներին: Կազմակերպվել են 24 մարզական միջոցառումներ՝ բասկետբոլի, վոլեյբոլի, հանդբոլի, մինի ֆուտբոլի գծով: Դպրոցականների

միջև անց են կացվել մրցումներ, շախմատի օլիմպիադա, ԼՂՀ Ազգային ժողովի՝ «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթ՝ «Առողջ ապրելակերպ» նշանաբանով: Ստեփանակերտ քաղաքում միաժամանակ կազմակերպվել են մարզական փառատոներ: Քաղաքի կոլեկտիվների միջև տարվա կտրվածքով կազմակերպվել են ավանդական դարձած բասկետբոլի, վոլեյբոլի, ֆուտբոլի թիմային մրցումներ:

Անցկացված մարզական միջոցառումների արդյունքում ի հայտ են բերվել Ստեփանակերտի լավագույն թիմերը, որոնք մասնակցել են հանրապետական առաջնություններին, ստուգատես մրցույթում գրավելով 1-ին տեղը, պարգևատրվել նվերներով ու պատվոգրերով:

Արտաքին կապեր

Տարեցտարի առավել արգասաբեր և հեռանկարային է դառնում մայրաքաղաքներ Երևանի և Ստեփանակերտի միջև սերտացող համագործակցությունը, ինչը ներառում է ամենատարբեր ուղղություններ: 2013թ. Երևանի քաղաքապետարանն ակտիվ աջակցություն է ցուցաբերել քաղաքային տնտեսությանը՝ կառավարման ոլորտում, ինչպես նաև իր հարուստ փորձն է հաղորդել քաղաքապետարանի բաժիններին. տեղեկատվական օգնություն է ցուցաբերում եկամուտների հաշվառման և հավաքագրման մասով՝ հարկային դաշտի ուսումնասիրման, մի շարք օրենքներում փոփոխություններ կատարելու, գույքային հարկերի հաշվառման բազաներում աշխատանքների պարզեցման, հողի և գույքի վարձակալության վարձավճարների տվյալների բազա ստեղծելու, վարձակալության վարձավճարների հաշվառման տեղեկատվական համակարգի ապահովման և թեստավորման ուղղությամբ: Արդյունավետ փոխգործակցություն է ապահովվել վերահսկողական ծառայության, համայնքային գույքի կառավարման, զարգացման ծրագրերի, ճարտարապետության և քաղաքաշինության, իրավաբանական բաժինների միջև: Արգասաբեր պետք է որակել Երևանի քաղաքապետարանի «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի և «Շտապ բուժօգնություն» ընկերության կողմից Ստեփանակերտի բժշկական հաստատություններին ցուցաբերած բուժօգնությունը, ինչը շարունակական բնույթ կկրի:

Համագործակցության շրջանակներում պատվիրակությունների կողմից թվով 8 փոխայցելություն է կատարվել: Երևանի քաղաքապետարանը Ստեփանակերտի քաղաքապետարանին է նվիրել թվով 130 նստարան, տեղեկատվական շտեմարան ծրագրով համալրված ժամանակակից համակարգիչներ: Առավել հատկանշական է այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետ պարոն Մարգարյանի ձեռնարկմամբ այս տարվա գարնանը Ստեփանակերտում կմեկնարկեն «Ազատամարտիկների այգու» հիմնադրման աշխատանքները: Հանգստի գոտին, որ կամբողջանա ճարտարապետական հետաքրքիր լուծումներով, յուրահատուկ նվեր կհանդիսանա ստեփանակերտցիների համար և կխորհրդանշի Արցախյան ազատամարտում նահատակված հայորդիների հիշատակը:

Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Քաղաքապետ